

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ՔՐՈՆԻԿ

Ֆրանսիական Պանաման Րիբո'ի ճառը, խոսչական Պանամա Կոնակցութիւնների նախագահութեան ընտրութեան համար Միացեալ Նահանգներում:

Անշրամեշտ ենք համարում տեսել մի քանի խօսք Գողթրուա Կաւենակի ալն բանաձև օրակարգի մասին, որ մենք անցեալ քրոնիկում «նշանաւոր» անւանեցինք և որը ընդունեց պալատի կողմից ձաճերի ահադին առաւելութեամբ ղնդդէմ երեքի միայն: Սակայն նորից մէջ բերենք այդ բանաձևը. «ժողովը՝ կամենալով աշակցել կառավարութեանը սրա գործին—վաճառելութեան ամեն մի արտապալտութեան հալածելուն և վճռելով այլ ևս չը թող տալ կրկնելու կառավարութեան ալն գործադրած միջոցներին, որոնց պալատը դատապարտում է—անցնում է հերթական գործերին»:

Այդ բանաձևը նշանաւոր էր նրանով, որ առաջարկում էր մի համոզւած հանրապետակի կողմից, ինչպիսին է Լաւենեակը, որը, բացի ալն հանգամանքից, որ նախընթաց մինիստրութիւններից մինի մէջ վարում էր ծովալին մինիստրի պաշտօնը,—ներկայումս հանդիսանում է իրբ նախագահացու Լարնո'ի տեղը: Այդ բանաձևը նշանաւոր եղաւ նաև ալն պատճառով, որ նա ի մի գումարեց և հանրապետականներին պլիւս մինիստրութիւնը և նախագահը և հակահանրապետականներին:

Մինիստրութեան նախագահ Րիբո'ն ընդունեց այդ բանաձևը նրա համար, որ ըստ իրան ալն բանաձևը ոչինչ պախարակող բան չէր պարունակում ընդդէմ ներկալ մինիստրութեան. սա է պատճառը որ և հանրապետականները այդ բանաձևի կողմն անցան:

Հակահանրապետականները, ընդհակառակն, ընդունեցին այդ բանաձևը, որովհետև ըստ իրանց այդ բանաձևով աշկարալ պախարակում էին նախընթաց հանրապետական կառավարողների գոյրծելու եղանակները:

Վերջապէս այդ բանաձևը նշանաւոր եղաւ և ալն պատճառով, որ երբ լալտին եղաւ քւէարկութեան հետեանքը—հանրապետականները և ինքը

Րիբո՛ն պահանջ զգացին ալդ հարցը նորից հանդէս բերելու, որպէս զի բացատրւի ալդ թիւրիմացութիւնը քանի որ մինեոյն բանաձեւը հակառակ կուսակցութիւնների կողմից համարուած էր արտալատութիւն իրա տեսակէտների, իրա ցանկութիւնների, իսկ հակահանրապետականները մինչև անգամ տարած լաղթութիւն էին տօնում հաւատացնելով, որ բանաձեւի ընդունելովը իրանք պարտութիւն հասցրած լինին հանրապետականներին:

Այս՝ ի միջի ալոցից փետոյ, մեր նպատակն էր իսկապէս կանգ առնել Րիբո՛ն և ըկար ճառի մի կէտի վրա, ալն ճառի, որ մինիստր նախագահը արտասանեց Գ. Կաւենակի բանաձեւը քննարկելուց առաջ: Ահա Րիբո՛ն ճառի ալդ կտորը.

«Այո, պարոններ, մենք, նոյնպէս որպէս և պ. Կաւենակը, չենք կարծում, որ Պանամայի բոլոր գործը կարող է սահմանափակել լոկ ուղղիչ ոստիկանութեան և դատաստանի պատերով:

Այս գործը ունի աւելի լալն նշանակութիւն. նրանով շոշափւած է զգալի կերպով հանրապետութեան քաղաքականութեան դիրքը: Մենք ապրում ենք մի ընթիմի տակ, որը հիմնւած է հասարակաց կարծիքի վրա: Նոյն իսկ Պանամայի պրոցեսից առաջ եղել են բոլորներ երբ կասկած էր ծնւում՝ թէ արդե՞ք մեզ ղեկավարող մեծ ռամկապետութիւնը—ընդհանուր ձայնտութիւնը առ միշտ հաւատարիմ կը մնալ խիստ չիտակութեան աւանդութիւններին, չիտակութեան, որով պարծենում է մեր հպրեճիքը:

Կարծիք էր առաջ դալիս թէ ալդ ռամկապետական ձայնտութիւնը չի հետելի արդեօք միւս, թէև զօրեղ, ռամկապետութիւնների օրինակին, բալց որոնց մէջ երբեմն մատնանիչ են անում դրամագլխի իշխան ու լութեան վրա, իբր մի վտանգի քաղաքական բարքերի համար: Սա—մեծ սկզբունք է, սա—կարեոր խնդիր է, փողի ալս իշխանութիւնը ռամկապետութեան մէջ...

Գ ը լ ո ճ ի լ՝—Գրամագլխի իշխանութիւնը իրան զգալ է տալիս ոչ միայն հանրապետութիւնների մէջ, նոյնը տեղի ունի նաև սահմանադրական միապետութիւնների մէջ, Անգլիալում, Իտալիալում:

Ր ի բ օ՝—Փողի ալդ իշխանութիւնը անդրադառնում է ոչ միայն կառավարելու եղանակների և ձևերի վերալ, ալ և առանձնապէս ընտրութիւնների վերալ, ալսինքն ամեն քաղաքական իշխանութեան նոյն իսկ աղբիւրի վերալ: Մեր ապագալ ռամկապետութեան համար չըկալ սրանից աւելի կարևոր, աւելի էական խնդիր:

Այս պալմանների մէջ ևս բոլորովին համակարծիք եմ պ. Կաւենակին. ինչպէս և նա, ևս ցանկանում եմ, որ մեզ լաջողէր հեռացնել մեր հասարակական բարքերից ալն ամենը, ինչ որ, թէկուզ հեռաւորապէս վիշեցնէր

անփութ եղանակներ, ձևեր, քաղաքական ու թիւնը բաժանել դրամական ամեն տեսակ հարցերի շփուածից:

Եւ եթէ պալատը, իւր իրաւունքներով դործելով, կը ցանկանայ լսել զեկոլոմնները, որ ներկայացնելու են իրան, և ենթարկել դրանց քննութեան, թող պ. Կաւենակը կամ ուրիշները առաջարկեն իրանց կարծիքով անհրաժեշտ միջոցները: Մենք պատրաստենք քննել ալդ միջոցները և, եթէ հարկ կը լինի, Նախանձեռնութիւնը վերցնել մեզ վրայ, բայց առաջմ դա վաղաժամ է»:

Պանամայի դործը ունեցաւ ալապիսով ալն մեծ օգուտը, որ հանրապետականների ուշադրութիւնը գրաւեց ալն մեծ և կարևոր խնդրի վրա, որ ունի դրամագլխի ոչ ժը ընտրութիւնների վրա, ընտրութիւնների որոնք, ինչպէս լատինի է, հիմք են կազմում ամեն մի հանրապետութեան համար:

Գալով Պանամայի դործիչներին, որոնց դատը, իւր երկրորդ ատեանի, լանձնած էր երդեալ դատաւորներին մենք մէջ կը բերենք, առանց սակալն մանրամասնութիւնների մէջ մտնելու, կալացրած ալս վճիռը.

1) Լեսոսպսը դատապարտած է մի տարաւ բանտարկութեան:

2) Բլոնդենը երկու տարաւ:

3) Բալօն հինգ տարաւ բանտարկութեան և զրկողութեան քաղաքացիական սրտուի և 75.000 Ֆրանկ տուգանքի վճարման: Բացի ալդ՝ Լեսոսպսը, Բլոնդենը և Բալօն պարտաւորում են վճարել ալն ֆեանները որի քանակութիւնը կը որոշի կառավարութիւնը նաև 375.000 Ֆրանկ Մոնչիկուրին, որը, ինչպէս լատինի է, ընտրած է Պանամայի ընկերութեան դործերին վերջ տալու համար:

Ֆրանսիական Պանամայի մասին մեր խօսքը կը վերջացնենք ասելով որ երեք նշանաւոր ուժեր՝ Ֆրեյսինէ, Կլեմանսօ և Ֆլոկէ պիտի հեռանան քաղաքական ասպարիզից անորոշ ժամանակով և գուցէ առ միշտ:

Յունւար 18 (ն. տ. 30) ըտեթ լրագրերը տպագրեցին մի աջապիսի հեռագիր Հռոմից ստացած. «դատաստանական քննիչը ուղարկել է 30 անձանց հրաւիրաթղթեր դատարան ներկայանալու համար Հռոմի բանկում եղած զեղծումների առիթով: Նրէկ երեկուկեան ձերբակալեց առևտրի ղեպարտամենտի կառավարիչ Մոնցիլլին, Զեռակալութիւնը կապ ունի բանկի զեղծումների հետ»:

Հետեալ օրալ հեռագիրը տեղեկացրեց, որ Մոնցիլլին իւր ձեռքակալութիւնից առաջ եղած խօսակցութեան միջոցին լատինեց, որ «եթէ ամենը պարզել—շատ երբ բարձր գիրք ունեցողներից աքսորի պիտի արժանանան»:

Բանից դուրս եկաւ որ ալս հեռագիրը ոչ թէ մի սովորական բանկալին զեղծումի մասին էր հաղորդում, այլ թէ դրանով սկսեց մի խալական Պանամայի գործ, եթէ ոչ Ֆրանսիականի մեծ չափերով, բայց նախ կաշառակերպին բնաւորութեամբ:

Խալական Պանամայի գործը չէ կապւած ջրանցքներ փորելու հետ, այլ բանկալին գործի հետ, մի գործի, որը դուած է Ֆրանսիական «բանկ դը Ֆրանս»-ի հիմունքների վրա: Ինչպէս որ Ֆրանսիական «բանկ դը Ֆրանսը» չէ մի պետապաշտկան հաստատութիւն, այլ պատկանող մասնաւոր անձանց մի բանկ, որը սակալն պետութեան հսկողութեան ներքոյ է և պալմաններով կապւած պետութեան հետ, — ահպէս էլ խալական շրջանն բանկերը արտոնութիւններ են վալելում շրջանաւորութեան դուրս բերել թղթադրամ՝ իրանց ուզած քանակութեամբ: Եւ լինալ զեղծումները տեղի են ունեցել հէնց շնորհիւ ալդ իրաւունքի. բանկերը շրջանաւորութեան են լանձնել աւելի մեծ գումարի թղթադրամ, քան նշանակել են իրանց տոմարներում, իսկ ալդ գումարների զանազանութիւնը ալդ բանկերի կառավարիչները կամ՝ մասամբ սեփականացրել իրանց, կամ՝ գործածել, իբր կաշառ, զանազան դիրք ունեցող անձաց վրա:

Յունւար 26 (ն. տ.) խալական պարլամենտում մինիստր Նախագահ Ջիոլիտտի'ն ի պատասխան իրան արած հարցապնդումներին ասաց, որ Հռոմի բանկի Նէպոլի բաժնում գտնւած զեղծումների պատճառով (շրջանաւորութեան էր լանձնւած տոմարներում նշանակւածից աւելի՝ 65 միլ. ֆրանկ) ձեռքաւած են կառավարիչ Տաուլուգո և գանձապահ Լացցարոնիս Անտոնետի Ջիոլիտտի'ն աւելացրեց որ կառավարութիւնը միջոցներ է ձեռք առնում միացնելու համար բոլոր շրջանն (Эмиссионный) բանկերը — կանոնաւորելու համար թղթադրամի շրջանաւորութիւնը և որ ամեղաւորները, ովքեր որ էլ լինեն — կենթարկւեն արժանացած պատժին: Ապա մինիստր Նախագահը խնդրեց չը կազմել չատուկ պարլամենտական լանձնաժողով գործի քննութեան համար, քանի որ ինքը կառավարութիւնը ցանկանում է և հէնց ինքը կաշխատի «լոյս գցել ալս գործի վրա»:

Ամբողջ երեք օր շարունակւում էին պարլամենտական վիճարանութիւնները և վերջ ի վերջոյ պալատը համաձայնեց չը նշանակել չատուկ լանձնաժողով գործի քննութեան համար: Այս վիճարանութիւնների ընթացքում իւր խիստ չարձակումներով աչքի ընկաւ ընկերվարական պատգամաւոր Արլանսի:

Սակալն աղմուկը ախքան տարածեց Լիւտրնո, Լուկկա քաղաքներում, որ ոչ միայն մասնաւոր անձինք, այլ նոյն իսկ վարկալին հիմնարկութիւնները հրաժարւում էին ընդունել Հռոմի բանկի շրջանաւորութեան լանձնւած թղթադրամը:

Գանք ալժմ ձերբակալածներին և ղեղձումներին:

Ձերբակալած է Հոռմի բանկի Նէապոլի բաժնի կառավարիչ կոմանդոր Կուչինիէլլոն, որը 30 տարի է ինչ վարում է իւր ներկա պաշտօնը: Ձերբակալուող առաջ նա փորձ էր փորձել անկալտ մնալ նոյն իսկ Հոռմի մէջ ծառայել ձեռք, փախչելով Նէապոլից և թողնելով դրամարկի մէջ իւր զոգացած երկու և կէս միլիոն ֆրանկի փութարէն իւր ստացականը: Նա ալժմ 74 տարեկան է և իրան պահում է շատ ցինիկական կերպով:

Բանտարկւած է նոյն բանկի (Նէապոլի բաժնի) գանձապահը — Գ'Ալեսանդրոն:

Բանտարկւած է «Հոռմի բանկի» կառավարիչ Տաուլոնգոն և սրա դանձապահ Լացցարոնի: Այս բանտարկւածները ալնպիսի ցուցմունքներ արին, որոնց հիման վրա շոշափւում էր շատ շատերի դրութիւնը և չնայած որ զոցա խօսքերը հաստատում են այն մի քանի թղթերով որ գտնուել են դրանց տներում — խուզարկելիս — ալնուամինալնիւ դատաստանական քննիչը անբաւարար համարեց ալ դուրը նոր մեղադրուողներին ևս դատի կանչելու:

Գատի կանչւեց և ձերբակալւեց դրանցից մինը — այն է կոմանդոր Մոնցիլլին — ասպետ շատ խտալական և օտար, նաև ֆրանսիական պատուէ Լիզէոնի, չքանչանների, ներկալումս կառավարիչ առևտրական և արդիւնագործական ղեկարդումներով մի մարդ, որ շատ անդամ ներկայացուցիչ է հանդիսացել խալիպի կողմից օտար պետութիւնների նետ առևտրական պալմաններ և դաշինքներ կապելիս: Մոնցիլլին մեղադրւում է 100.000 ֆրանկ Տաուլոնգոնի ստացած լինելուն՝ նախընթաց վերատուգութեան ժամանակ — Հոռմի բանկի դրութիւնը իբր բարեւալող դրութեան մէջ լինելը բարտարելու համար:

Ձերբակալւած է մի ոմն Պոմպէա, որը մի տարի առաջ Հոռմի բանկում ծառայելիս լաջողել էր զոգանալ մօտ կէս միլիոն ֆրանկ:

Այս բոլորի ժամանակ Նէապոլում հրատարակող «Corriere di Napoli» թերթը սկսեց իւր արշաւանքը միմիտրութեան դէմ:

Սա հրատարակեց մի շարք պաշտօնական ղոկումներ վերաբերեալ բանկերի նախկին վերաստուգող լանձնաժողովների ղեկուցումներին, որոնք մնացել էին բարձի թողած և հէնց ալ պատճառով տեղիք տւել ներկալ խալտառակ սկանդալներին: Այս նոյն թերթը իւր փետրար 6 (ն. տ.) համարում մի լօղւած ղետեղեց, որի գլխաւոր մեղադրական կէտերն են, իբր լուրեր, թէ:

1) Հոռմի բանկի գումարներից Տաուլոնգոն վճարել է հասարակական շինութիւնների ներկալ միմիտր Լակաւաին 10.000 ֆրանկ, ֆինանսների ներկալ միմիտր Գրիմալդին 15.000 ֆր. և Կանտոնի ստորագրութեամբ՝ Ջիոլիտտին 110.000 ֆրանկ:

2) Ներկայ մինիստրութիւնը ստացել է ընտրողական գործի համար Տոսկանայի ազգային բանկից—40.000 ֆրանկ:

3) Նոյն նպատակի համար ստացւած է իտալական ազգային բանկից—200.000 ֆրանք:

4) Նաւագնացային ակցիոներական ընկերութիւնը՝ «Navigation-Generale»-ը նմանապէս նպաստներ է տւել նոյն գործի համար: Ապա օգտւածը կրկնում էր արդէն մամուլի մէջ եղած հետեւեալ լուրը. «Ընտրութիւնների համար կազմւած էր լատուկ մի գանձարան (gacca), ուր մէջ էին բերում իրանց լուծմանը գրեթէ բոլոր կարեւորագոյն բանկերը, վարկային հիմնարկութիւնները, մի քանի մասնաւոր անձինք, նոր նշանակւած անհատորներ և վերջիններին թւում նաև Տաուլոնգոն»:

«Պատմում են, շարունակում էր լրագիրը, որ ամենապատուաւոր մարդիկ թող էին տալիս օգտւել իրանց անոճաններից՝ բանկերում վարկ ձեռք բերելու համար, եթէ զանազան շահագէտներ, սպեկուլիատորներ հիմնում լինէին մեծ թերթեր մինիստրութիւնը պաշտպանելու պարտաւորութեամբ»:

Եւ ապա լրագիրը անում էր մի քանի թափանցիկ ակնարկութիւններ:

Այս լուրերը իրանց կողմից ծնեցրին ուրիշ տեսակ լուրեր սկսեցին խօսել թէ խնայողական—պահեստի գանձարանների կառավարիչները նմանապէս զեղծումներ են գործել բաժանելով իրանց պահուած գումարները իւր կաշառ ալն լանձնաժողովի անդամներին, որոնք պիտի քննէին խնայողական—պահեստ գանձարանների կանոնադրութիւնը: Իսկ այս լուրերի հետեւանքը ալն եղաւ, որ շատ շատերը սկսեցին ետ պահանջել պահուած իրանց գումարները:

Սկսեցին լուրեր պտտել որ նման զեղծումներ գործւել են և բոլոր միւս շրջանան բանկերում և որ ալք բանկերի կառավարիչները կաշառներ են տւել քննիչ լանձնաժողովի անդամներին շրջանան բանկերի սխտեմը պաշտպանելու պատւերով և նոյն իսկ կառավարութեանը՝ ընտրողական գործի համար:

Նոր ձերբակալւածների թւումն են բաւան լացցարոնի—բորսային և բանկային նշանաւոր մի գործիչ¹⁾, քեռորդի արդէն բանտարկւած կոմանդոր լացցարոնի՝—ձեռմի բանկի գլխաւոր գանձապահին:

¹⁾ Իւր հօր մահից փտող ստացաւ քսան միլիոնի ժառանգութիւն: Չնայած իւր երիտասարդ հասակին—բառենը երեսուն տարեկանից պակաս է, նա կամ անգամ է վարչութեան կամ նախագահ 11 ակցիոներական ընկերութիւնների և կառավարիչ մի քանի բանկերի: Նա չպտնի է նմանապէս և իբրև գրող. նրա մի գրւածքը կոլումբոսի մասին պսակւեց Ակադեմիայի կողմից:

Շատ աղմուկ հանեց նաև պատգամաւոր զը Յերբիի ¹⁾ դատի կանչւելը, որը իբր թէ ստացել է Հռոմի բանկից 400.000 Ֆրանկ պալատում պաշտպանելու համար օրինադիժը լոգուտ լիշեալ բանկին:

Բանտարկւած է նշանաւոր փաստաբան Բելլուչին՝ Նէապոլի բանկից 40 միլ. թղթադրամ Հռոմի բանկը տեղափոխելուն համար:

Այս բանկալին զեղծումների հետ կապ պիտի ունենայ թերևս 1) նոտար Բարտոլոմի սպանութիւնը երկաթուղու գնացքի ժամանակ մինչդեռ նոյն կառավարմամբ ուղեկցում էին 40 ժանդարմ. կարծւում է թէ Բարտոլոմի իբր նախկին կառավարիչ Սիցիլիալի բանկի—գիտէր շատ մանրամասնութիւններ 1891 թ. իբր կաշառ գործածւած 2¹/₂ միլ. Ֆրանկի մասին, 2) սնանկութիւնը Guerrini et Co առևտրական տան քանի որ վախեցած հասարակութիւնը մի քանի օրում ետ ուղեց դրան ի պահ տրւած մօտ 4 միլ. Ֆրանկը, և ալլն, և ալլն:

Մենք արդէն ասացինք որ Ջիոլիտտի մինիստր նախագահը հասաւ իւր նպատակին և որ պալատը համաձայնեց առժամանակ չը նշանակել պարլամենտական քննիչ լանձնաժողով:

Ջիոլիտտի'ի մինիստրութիւնը լիապէս օգտեց ալդ հանգամանքից քանի որ դեռ ալդ վճռեց առաջ նա տւել էր ալդ գործին մի ընթացք բոլորովին համապատասխան իւր հալեացքին: Եթէ մի կողմ թողնենք ալ լուրը որ բանկում կատարած խուզարկութիւնների ժամանակ գտնւեց Ջիոլիտտի'ի համար վերցրած գումարի ստացականը—իրողութիւնը սա է որ լիշեալ խուզարկութիւնը կատարեց կլիստրի ձեռքով (ոստիկանապետ) մի հանգամանք որ ընդդէմ է խալական օրէնքներին— քանի որ գործը լանձնւած էր դատաստանական վարչութիւններին, մինչդեռ կլիստրը գտնուած է ներքին գործերի մինիստրի կարգադրութեան ներքոյ, ալլինքն հենց իրա Ջիոլիտտի'ի:

Այսպէս թէ ալլալլս շատ շատերը քաղաքական գործիչներից խախտւեցան և ստւերաձգութիւնների ենթարկւեցին: Հռոմերտ թաղաւորը վճռեց վճարել իւր սեփական զանձարանից Հռոմի բանկին ալն չորս միլիոն Ֆրանկ գումարը որ տրւած էր քաղաքական գործիչներին: Ստւերաձգութիւնների ներքոյ է և հողագործութեան նախկին մինիստր Միչելլի'ն և Նիկոտերա'ն և Կրիսպի'ն և նոյն իսկ Ռուդինի'ն թէև ալս երկուսը նոցա կոմն էին որոնք պահանջում էին պարլամենտական քննիչ լանձնաժողովի կազմելը:

Մենք կը վերջացնենք խոսակական Պանամայի սկանդալի մասին խօ-

¹⁾ Աչքի ընկնող հրաշքարարիաթօս և ամուսին խալուհի նշանաւոր գրող Մատիլդա Սերաս'ի, Հեռագիրը հաղորդեց որ Յերբի'ն վախճանեց բանտում:

սելը ասելով, որ ըստ խալական լրագրերի—Ջիոլիտտի'ն կարող է շարունակել մնալ իբր նախագահ մինիստր եթէ հեռացնի կասկածի ենթարկած Գրիմալդի'ին—պետական կալածների մինիստրին, Մարտինի'ին—որը վարում է ֆինանսների մինիստրի պաշտոնը և է լուսաւորութեան մինիստր և լակկաւա'ին հողագործութեան և առևտրի մինիստրին:

Վերջին տեղեկութիւնների համաձայն—Ջիոլիտտին մի նոր օրինագիծ է առաջարկել պալատին, որով միացնում են մի քանի չրջահան բանկերը և որով թղթադրամի չրջանահանութիւնը դրւում է կառավարութեան տնօրինութեան ներքոյ:

Մարտի 2 (ն. տ.) նորընտիր ամերիկական նախագահը մուտք գործեց Սպիտակ Տունը, Նա ունի իւր չուրջը իւր ընտրած նոր մինիստրներին՝ կարլալ'ին (ռամկապետական)—ֆինանսների մինիստր, Գրեշամ'ին (հանրապետական)—արտաքին գործերի մինիստր, Հուկ Սմիթ'ին—ներքին գործերի, և Բլասկե'ին—փոստի մինիստր:

Մենք արդէն ծանօթացրինք «Մուրճ»-ի ¹⁾ ընթերցողներին ամերիկական Միացեալ Նահանգների նախագահի ընտրութեան վերաբերեալ նախապատրաստական ժողովների հետ:

Գանի որ ալժմ ֆրանսիացիք ուզում են կուսել քաղաքական ընտրութիւնների վրա փողի ունեցած իշխանութեան դէմ, մենք համարում ենք միանգամայն լարմար ծանօթացնել թէ ինչպէս են տանում ընտրողական գործը ամերիկական կուսակցութիւնները: Ուստի օգտւելով մի ֆրանսիական լօււաժից, ²⁾ կը ծանրանանք աչն հետաքրքրական մանրամասնութիւնների վրա, որոնք շատ լաջող կերպով ընդունում են Միացեալ Նահանգների քաղաքական կեանքը չալտնի չրջանակի մէջ:

Մեր ընթերցողները տեղեկացած կը լինեն արդէն լրագրերից որ նախագահական պաշտոնական վերջնական ընտրութիւններին չաղթող հանդիսացաւ Գրովեր Կլեւլանդ'ը 277 ձայներով ընդդէմ 145 ձայների որ տրւեցան Բենեամին Հարրիսոնին և 22 ձայն Ուիլիք'ի օգտին: Այդ չաղթութիւնը հետևանք է ռամկապետականների նախապատրաստական մեծ գործունէութեան, որի արդիւնքը եղաւ՝ մեր ընթերցողներին արդէն ծանօթ վճիռը ռամկապետականների ժողովի: Բայց իսկապէս կուսակցութիւնների գործը իրանց թիկնածուների օգտին սկսել էր այս թականից էլ առաջ, ապինքն աչն ժամանակ երբ հանրապետականները իրանց

¹⁾ «Մուրճ» 1892, № 10, էջ 1528—1535.

²⁾ Revue des deux Mondes, 1892, octobre,—les coulisses de la vie politique aux Etats-Unis, par C. de Varigny.

կողմից և ուսմկապետականները իրանց—ձեռք էին բերել իրանց թիկնածուների հաւանութիւնը և վճիռը թիկնածու հանդիսանալու:

Ալդ գործունէութիւնը կաւանում է նրանում, որ սկսում են լիող ժողովէլ գործի համար, նշանակել այն անձը, որը պիտի ղեկավարի ընտրութեան նախապատրաստական մանրամասնութիւնները, նշանակել այն գործակալները, որոնք պիտի վիշիալ գլխաւոր ղեկավարի ձեռքի տակ լինեն,—մի խօսքով պտտացնել ընտրութեան գործիքի բոլոր անիւնները:

Միացեալ Նահանգների թիւը է 44, կազմւած 2241 վիճակներից (district): Ամեն մի Նահանգ ունի մի չափնի քանակութիւն քաշների, որը աւելանում է բնակիչների աւելանալովը: Ալապէս—1872 թ.ին բոլոր Նահանգները իրաւատէր էին 328 քէէի, 1876 թ.—369, 1888—401, իսկ անցեալ տարի արդէն 444 քէէները, ուստի նախագահ ընտրւողը պիտի ստանար առ նւազն 223 քէէ: Ալդ 444 քէէները անցեալ տարի բաժանւած էին ալապէս. Նիլու-Խօրկ Նահանգը տէր էր 36 քէէի, Պենսիլվանիա՝ 32, Իլլինօյսը՝ 24, Օհիօն՝ 23, Միսսուրի՝ 17, Տէլասսը, Ինդիանա՝ և Մասսաչուսեթսը՝ տասնհինգականների և ալլն: Նախագահի ընտրութիւնը կախւած է մի մի ալն ալս քէէների ձայնատուութիւնից: Թող ընթերցողը Յիշի որ 1888 թ.ին թեկնածու կլեւլանողը ստացել էր 5.538.434 ձայն, բալց չաղթող հանդիսացաւ Բ. Հարրիսոնը ստացած 5.440.551 ձայներով, որովհետեւ ալս վերջին ձայները ներկայացնում էին իրաւատէր 233 քէէների ընդդէմ 168 նոյնպիսի քէէների լօգուտ կլեւլանողի—թէկուզ ալդ 168 քէէին ձայն տուողները աւելի են եղել քան 233 քէէներին: Մի խօսքով հաշւի է առնւում Նահանգի իրաւունքը: Նւ ալդ է պատճառը, որ եղած կուսակցութիւնները՝ հանրապետականները ու ուսմկապետականները ալ-խատում են ձայների որ և է առաւելութեամբ ընտրած լինեն իրանց կուսակիցներին: Ընտրողութեան գործը ծանրանում է ալդ հանգամանքի վրա և ամբողջապէս նւիրւած է լինում ալդ գործին: Ամեն մի կուսակցութիւն որոշելուց և ձեռք բերելուց լետոյ իւր նախագահական թեկնածուի ընտրւելու հաւանութիւնը—ալխատում է ամեն կ երայ հաշակել, չափնի կացուցանել իւր ալդ թեկնածուի անունը, գործ ղնելով ամեն մի միջոց կոտրելու համար հակառակ կուսակցութեան թեկնածուի վարկը:

Ընտրողական գործը տանելու և չաջողացնելու համար կուսակցութիւններից ամեն մէկը ընթանում է միեւնոյն ծրագրով: Ալդ ծրագիրը շատ բազմակողմանի է և բաղկացած է ալսպէս ասած հետեւեալ մասերից:

Ընտրւում է մէկը չատուկ ալն բանի համար, որ ամեն ներքի ու աններքի միջոցով պարտաւի ու վալր գցի հակառակորդ թեկնածուի անունը: Գործը երբեմն ալնանդ են հասցնում, որ հակառակորդ թեկնածուի ամբողջ կեանք քրքրելով մի մեծ արատ են հաշակում զրա թէկուզ տալը տարեկան հասակում գործած մի տղալական օրինաղանցութիւնը, կամ

թէ մեղադրում, ինչպէս որ ալդ պատահեց զէպի կլեւանդը, իբր թէ նա բռնի վարում լինի իւր կնոջ հետ, մինչդեռ իրողապէս նա պաշտում է իւր կնոջը:

Ընտրւում է մի ուրիշ անձ, որի գործը կալանում է քննադատելու երկու կուսակցութիւնների դաւանած սկզբունքները:

Ընտրւում է մի երրորդ անձնաւորութիւն ժողովրդական ճառախօսութիւնների, հրապարական դասախօսութիւնների համար: Ինչ ասել կուզի, որ դրանցից ամեն մէկը, նաեւ թէ ինչ կուսակցութեան է պատկանում, աշխատում է ալդ գործով համախոհներ ձեռք բերել:

Ընտրւում է մի չորրորդը, աւելի զգուշաւոր, խորհրդապահ մէկը, պաշտօններ ու զանազան չաղ ու միջակ տեղեր խոստանալու համար:

Ընտրւում է վերջապէս մի հինգերորդը հսկելու համար թէ հակառակորդների գործունէութիւնը և թէ իրանց սեփական կուսակց լինան համախոհների արածը:

Ձորս ամբողջ ամիսներ տևում է ալս մաշինակի գործը—օր օրի վրայ աւելի և աւելի տաքանալով: 44 նահանգներից ամեն միւսում նիստ ունին թէ հանրապետական և թէ ռամկապետական մի մի ժողովներ, որոնց ուղղութիւն է տալիս հանրապետական և ռամկապետական կենտրոնականը, որոնցից ամեն մէկը կազմւած է ամեն մի նահանգի ներկայացուցիչներից, մի քարտուղարից և մի նախագահից: Այս վերջիններս լինում են պետական անձնաւորութիւններ, եփ եկած պոլիտիկոսներ ու հրով ու բովով անցած գործիչներ:

Նախագահական թեկնածուն չը նաեւ որ գլուխ է կուսակցութեան գործին—բալց և ալնպէս ընտրութեան գործունէութեան ընթացքում իրան ալնպէս ասած ծանր է պահում: Գործը ղեկավարում է ընտրւած մէկը որը, չաղթութեան դէպքում լինելու է ապագայ նախագահի աջ թևը: Այդպէս եղաւ հանրապետականների ընտրողական գործին ղեկավարող Ջեմս Բլենը 1888 թւին: Ինչ ասել կուզի որ ալդ ընտրւածից կախած է շատ և շատ բան, քանի որ ընտրողութեան ամբողջ մաշինան նրա ձեռքի տակ է: Նա ունի շատ օգնականներ, որոնք իրան ամեն օր գլուկուցումներ են տալիս կատարածի մասին թէ իրանց և թէ հակառակ բանակում: Նա քննում է շահածի և տարւածի պատճառները և աշխատում կարելոյն չափ թուլացնել հակառակորդին: Սրա ամենամօտ օգնականն է նա, որի ձեռքի տակն է ալն բոլոր գումարը, որ կուսակցութիւնը ժողովում է իւր թեկնածուի գատը պաշտպանելու և չաղթութիւն տանելու համար:

Կուսակական ալդ ժողովարարութիւնների գումարները իրարից շատ չեն տարբերում, բալց նկատած է որ դոքա տարեցտարի աւելացել են: Այսպէս հանրապետականների կենտրոնական մասնա-

ժողովը նախագահութեամբ մարշալ Yewell-ի ունէր 1880 թ. իւր կարգադրութեան տակ 450.000 դոլար կամ 2.250.000 ֆրանկ, 1884 թ. ալդ գումարը հասել էր 2.500.000 ֆր. 1888 թ. դառել էր արդէն մօտ 4 միլ. ֆրանկ, մինչդեռ ռամկապետականներին հասնում էր $3\frac{1}{2}$ միլիոնի ժողովարարութիւններին մասնակցում են մարդիկ հազարներով և ալն իրանց ուղած գումարներով չնչին գումարներից սկսած մինչև 10—20 հազար ֆրանկ, իսկ 1888 թ. պատահեց նաև մի շատ խոշոր գումարի ստորագրող, ալն է 1.250.000 ֆրանկի, Յիշեալ գումարների վրա պէտք է աւելացնել նաև ալն գումարը (մօտ $2\frac{1}{2}$ միլ. ֆրանկ ամեն մի կուսակցութեան օգտին) որ ժողովարարում են տեղական մասնաժողովները։ Եւ ալդ բոլոր գումարները մսխւում են on honor ¹⁾, ալ խօսքերով—դոցա մսխելու մասին հրապարակական հաշիւ չէ ներկայացնում, ալ շատ շատ լատենում է, դադտնի պահելու պալմանով, կուսակցութեան աղդեցիկ անդամներին։

Յիշենք ալտեղ որ ալպէս ասած դան ձապահի դրութիւնը շատ փափուկ է. պատահում է որ ժողովարարութիւնը դանդաղ է դնում, իսկ ծախսերը անլետաձգելի են և ահա նա ստիպւած է լինում լրացնել ալդ գումարը—սուսողը ինքն է լինում, Ալպէս նախընթաց ընտրութիւնները նստեցին ղեկավարող ռամկապետական Բրալս'ին 2.300.000 ֆրանկ որ և պատճառ պէտք է համարել որ ալս անգամ նա հրաժարեց իրան առաջարկւած նոյն պատուից։

Մինչդեռ ընտրողական գործում բոլոր ախնատաւորները որ և է շահ ունին—կամ կանխիկ կամ ապագայի լուսով—զանձապահի փառքը և հռչակը միմիալն ըսպէական է. թէկուզ նրա կուսակցութիւնը լաղթող հանդիսանալ, թէ պարտութիւն կրած—երկու դէպքերում էլ զանձապահը մնալու է անլալտ, ալսինքն ըստ սովորութեան չը պլտի ստանձնի և ոչ մի պաշտօն լաղթող հանդիսացած կուսակցութեան կառավարութեան օրերով։

Ի՞նչ բանի համար են գործադրում ալդ գումարները և ի՞նչ են կատարում կենտրոնականի ներքու գտնեղ նահանգական մասնաժողովները։

Մինչդեռ կենտրոնական բաժինները—նահանգական ընդհանուր ուղղութիւնն են տալիս և ի մի ժողովում բոլոր կատարւածը,—նահանգական մասնաժողովները սահմանափակում են իրանց գործունէութիւնը ամեն մէկը իւր նահանգի վրա, Ալն դէպքերում երբ նահանգը արդէն ճանաչւած է իւր ուղղութեամբ, ալսինքն է կամ հանրապետական կամ ռամկապետական—հակառակորդները պէտք է շատ քանք թափեն և ալն էլ դուցէ ապարդիւն,—լաղթելու համար, Բաց և ալնպէս

¹⁾ honor=պատիւ։

կուլը լինում է թէ ոչ ներկայ ընտրութիւններին չաղթելու, գոնէ ապագայի ընտրութիւններին:

Անպիսի նահանգներ, որոնք զիցուք հանրապետական էին, օրինակի համար Իլլինոյսը, արդէն անցնելու վրա են ռամկապետականների կողմը: 1880 թ. Իլլինոյսում հանրապետականների տոացած առաւել ձայները էին 40.000, 1884 թ. արդէն 25,122, իսկ 1888 թ.—22,190: Ինդիանա նահանգում 1888 թ. հանրապետականները՝ բոլոր տւած ձայներից՝ 536.949—մեծամասնութիւն էին ձեռք բերել միմիայն 2.348 ձայներ: Զնորիւ Անկասկած է որ ռամկապետականները ոչ մի վայր չեն խնայած լինիլ անցեալ 92 թւին ոչնչացնել ալդ աւելորդ ձայները և մեծամասնութիւնը իրանց կողմը դարձնել:

Վերը արդէն ասացինք, որ ինչ մեծամասնութիւն ուզում է լինի նահանգական ձայնատուութեան ժամանակ—չաղթող կուսակցութիւնը ձեռք է բերում նահանգի ունեցած բոլոր քւէները նահանգական վերջին ընտրութեան միջոցին:

Ամբողջ ընտրութեան կենդանութիւն տուողը, չաղթութիւն խոստացողը—ոսկին է և ինչքան որ նրա քանակութիւնը շատ եղաւ—չաղթութիւնն էլ աւելի հաւանական կը լինի: Բաց որպէս զի ընթերցողը համոզւի թէ իրաւ ոսկին մեծ դեր է կատարում նաև այս դէպքում—մենք կը վիշնք թէ ուր են գնում վերոյիշեալ հարիւր հազարները: (Մոռանալու չէ, որ երկու հակառակ կուսակցութիւններն էլ միմեկին միջոցներն են գործադրում): Փող է տրուում՝ ժողովրդէս կան հռետորներին, բրոշիւրներն երի—որոնք տպւում են հակերով, լրագրերի, օրաւ դէպքերի չափաբարեւուն, և իրաժիշտներին—հրապարակական երաժշտութեան համար, անխօս դերասաններին—որոնք տքնում են ոգևորութիւն առաջ բերել, համազգեստներ նւիրելու հրդէհաշէջներին, զանազան կամաւոր ընկերութիւններին, կառքերի, քանի որ ըստ ամերիկական առածի—«ընտրութեան ժամանակ ոչ մի պոլիտիկոս ոտով չի գնալ»:

Այս սողերը թէև իրանք շատ պարզ են խօսում ընտրութեան գործի բազմակողմանիութեան մասին, ակնուամենայնիւ,—մենք աւելորդ չենք համարում մէջ բերել նաև մի քանի թւեր:

1888 թւին հանրապետական կենտրոնական մասնաժողովը պալման էր կապել մի ոմն Դաւենպորտի հետ որպէս զի սա ընտրութեան օրը կառքեր մատակարարի: Դաւենպորտը ստացել էր ալդ բանի համար ոչ աւել և ոչ պակաս քան 600.000 ֆրանկ և հանրապետական լանձնաժողովը տւել էր ալդ պահանջած գումարը աչքի առաջ ունենալով կարեւորութիւնը դիւրութիւն տալու ընտրողներին—ընտրութեան մասնակցելու: Նոյն կուսակցութիւնը վճարել է 1888 թ. ընտրութիւնների աւիթով:

- 500.000 Ֆրանկ իբր ծախք տեղափոխելու և ցրելու համար՝ դու-
կումենտներ և լրագրական ու բրոշյուրալին հակեր:
- 550.000 Ֆրանկ իբր վճար կառքերի—տեղափոխուող հետադարձի
համար Սովորաբար ամերիկացին սակաւախօս է և լռա-
կեաց, բայց հանդիսաւոր օրերին, ընտրութիւնների ժա-
մանակ, նա տաքանում է, իսկ լեզուն բացում:
- 1.000.000 Ֆրանկ մսխած է լատկապէս անպիսի նահանգներում,
որոնք (Նիու Իօրկ, Նիւ-Ջերսի և Կոնեկտիկուտ) կասկա-
ծելի էին երևում:
- 1.000.000 Ֆրանկ իբր վճար կենդրոնական մասնաժողովի գրասե-
նեակներին և երաժշտութեան «իրա պարագանք երգի»:

Մի քանի խօսք և մենք վերջացրած կը լինենք: Ի թիւս ալոց գոր-
ծում են և դադարի ագենտներ, որոնց կողմը ան է որ հաշիւ տան
ընթացիկ գործերի մասին և հսկեն ամեն բանի վրա, մասաւանդ ալ հան-
գամանքների երբ լաղժող հակառակորդների ընտրութեան ժամանակ տեղի
է ունենում որ և է թիւրիմացութիւն, կամ թէ ընտրութիւնը անկանօն
է կատարում:

Լրագրական չօգւածներ և բրոշյուրների առատու-
թիւնը բացատրում է նրանով, որ երկու կուսակցութեան կողմնակից-
ների շրջանում գտնւում են բազմաթիւ մարդիկ որոնք ուղում են փախել
իրանց գրական, ճարտասանական ձիրքերով: Եւ որովհետեւ ժամանակ
էլ լինում ալ թաղէներին նրանց հետ վիճել, էլ ուր մնաց հակառա-
կելու—ուստի տպւում է ամեն մի գրածք:

Հետտորները լրաւ է չեն վարձատրւում իրանց արտասանած
ճառերի համար, բայց թէ տեղափոխութեան ճանապարհածախսը առատ
է հաշւում, որպէս զի ճառախօսը դժգոհ լինելու առիթ չունենալ:

Այսքանով արդէն հասկանալի են ան շարժառիթները որոնք տո-
պել են ամերիկացիներին մի տարով ետաձգել իրանց Չիկագօի համաշ-
խարհալին ցուցահանդիսի բացումը:

Ամերիկացիները վաղուց է որ նկատել են նախագահական ընտրու-
թիւնների պատճառով եղած արտակարգ հանգամանքների հասցրած
փնասները թէ աւետրին և թէ արդիւնագործութեան:

1888 թիւն կազմած չառուկ մասնաժողովը գնահատեց ալ Ֆլասը
հաւասար երկու և կէս միլիարդ Ֆրանկի!

Ալք գումարը որոշում է մասնագէտ եւմտագէտ մէկը, պ. Chauncey
Depew, որի կարծիքով «սովորական գումարը աւետրական և արդիւնա-
գործական լարաբերութիւնների հասնում է 5 միլիարդ դոլլարի և որ ալք
գումարը նախագահական ընտրութիւնների տեղութեան ամբողջ ժամա-
նակին պակասում կը լինի մի 10%, ասել է 500 միլ. դոլլարո կամ մի

միլիարդ ռուբլի։ Ամերիկացիների մի մասը պահանջում է որ փոխանակ ամեն չորս տարի կատարելու նախագահի ընտրութիւնը—դա լինի ամեն ութ տարին, կամ վեց տարին մի անգամ։ Միւս մասը իրաւամբ մատնանիչ է անում աֆն հանգամանքի վրա որ միլիոնատէրները վտանգաւոր կկարգով ազդեցութիւն են բանեցնում ընտրութիւնների վրայ։